

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ

Գրութիւնք եւ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Եթէ կ'ուզե՛ք «Հայեղի»-ին մէջ աղորոս երեւնալ,

Պատրիք սիրում եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Հայրապետը՝ Էջմիածնայ Մայր Տաճարի դրան մօտ Կաթողիկոսաց յատուկ դամբարան մը պատրաստած է, ուր իրեն գերեզմանն ալ որոշեր է. ապէք զատ Էջմիածնայ տաճարին հրապարակին վրայ միւռօնօրհնութեան յատուկ տեղ մը պատրաստել տուեր է, որպէս զի ուխտաւորաց բազմութիւնը չզրկուի նոյն հոգեւոր հանդիսին մասնակցութենէն:

— Կեսարիոյ Ս. Կարապետի որբանոցին մէջ պատրաստուած նորահիւս մեծ տաքսեայ գորգ մը, որուն մէջտեղը նշկարուած է Ս. Կարապետի վանքը, Կեսարիոյ Ս. Առաջնորդին միջոցաւ նուիրուեր է Մայր Աթոռին: Տփղիսի գորգի վաճառականները մինչեւ 50 ռսկի գնահատեր են այդ գորգը, որ իբրեւ հայ որբերու ձեռագործ աշխատութիւն շատ աւելի մեծ արժէք ունի:

— Ի նպաստ Հայաստանի սովելոյ Ամերիկայի Փրովիտէնս քաղաքի հայ գաղ-

թականներէն 250, Դօնքըրտ քաղաքէն 15, Թրոյէն 25 եւ Լօրէնսէն 40 ռսկի հանգանակուեր է:

— Այս տարի Պոլսոյ Բժշկական վարժարանէն ելնելիք 34 բժիշկներէ ութը հատը աւարտելով իրենց վերջին քըննութիւնները՝ վկայական ստացեր են: Այս 8 բժիշկներէն 3ը հայ են. Տ.ք. Միհրան Յ. Պետրոսեան՝ Առաջնորդի, Տ.ք. Կարապետ Մ. Իփիքճեան՝ Կեսարացի, Տ.ք. Կարապետ Պետրոսեան՝ Գըրշէհիրցի:

— Պարտիզակէն կը գրեն թէ, Շեքարմները հիանալի ճարպիկութեամբ հրասեր են խողակը օգերուն օժտեցաւութեամբը. ու թէն տերեւի սղութիւն է եղեր, բայց այդ ալ քիչ ժամանակի համար միայն: Անցած տարուընէ աւելի տարբեր է այս տարուան բերքը, թէ՛ գոհացուցիչ և թէ՛ գեղեցիկ:

— Կովկասի Նիզօլս Ա. անուն աղջկանց համալսարանէն այս տարի չորս Հայ ընթացաւարտ օրիորդներ ելած են:

ՇԱՏԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

Կ. Պոլսոյ Ղալաթիոյ «Միացեալ Պանդոկներու» ճաշարանին մէջ, զերջին կիրակի օրը երկու շատակերներ՝ մէկը Արշիպեղագոսի կղզիներէն և միւսն ալ Սամոթրակեցի, տարօրինակ գրաւ մը կը դնեն: Երկուքն ալ գէմ գիմաց նստելով կրցածին պիտի ուտեն շարունակ, և անիկա՝ որ ետ քաշուի կռուէն, իր մրցակցին պիտի վճարէ 500 դահեկան, միւսնոյն ատեն կերուած կերակուրներուն ծախքը վրան առնելով:

Երկու յոյները առաւօտեան ժամը 9ին (Ը. Ե.) սեղանին գլուխը կ'անցնին ու կսկսին թխել. ուղղութիւնը Արշիպեղագոսի կղզիներէն էր որ կուտար: Նախ, քիչ մը ակնորժակ բանալու համար օղի խմելու կելլեն չիրոզի ալցանին հետ ու բաւական ճնկելէ ետքը կանցնին կերակուրներուն: Եզան արդանակ, փուռը եփուած ոչխարի աղբը, վարունդի աղցան, հաց, նարինջ, իրարու կը յաջորդեն: Մէյմէկ օխա գինի իւրաքանչիւրին, մէյմէկ ալ խահուէ, և առաջին «նիսաը» կ'աւարտի:

Մարտողութիւնը դիւրացնելու համար երկուքական սիկառ ալ... կը խմն և շատ չանցած, երկուքն ալ անօթի կը ղզան ինքզինքնին: Օդը տաք էր և այս անգամ աւելի թեթեւ կերակուրներ են որ նախապատուութիւն կը ստանան երկուքին ալ կողմէ. չիրոզի աղցան՝ տօմատէսով և ձիթապտուղով, խորոված հաւ, Բէ, ֆալնիոյ պանիր, խահվէ, գօնեաք և այս երկրորդ նիստն ալ կ'աւարտի:

Երկու շատակերները՝ այդ անդային խառնուրդը ստամոքսներուն մէջ ամբարելէ ետքը դեռ աւելին թխելու տրամադիր զգալով ինքզինքնին, երկուքական սիկառ ալ կը խմեն, տասը վայրկեանի հանգիստ մը կառնեն ու պատառաքալը

ձեռքերնին՝ կրկին կերակուրներու գլուխը կանցնին. իրենց հրամանով սպասաւորը յաջորդաբար կը բերէ երկու պնակ մածուն, երկու պնակ Եւրոպայէն բերուած թուռչի, չորս երիկամունք, գինի ու պլատուներ, որոնք վայրկեանապէս կ'անհետանան: Բանի մը վայրկեան հանգիստ առնելէ ետքը նորէն կսկսին, և սպասաւորին միջոցով բերուած մաքառօնին, մածունով բիւրլը և ճերմակ ու կարմիր գինին ալ կ'անհետանան միւսներուն պէս:

Սամոթրակեցին տկարութեան նշաններ ցոյց տալ կսկսի թէեւ, բայց Արշիպեղագոսի կղզիներէն կ'առարկէ թէ ստամոքսը պարապ կը ղզայ և կը հրամայէ սպասաւորին որ բերէ երկու պնակ ապուր, երկու պնակ տապկած ձուկ, երկու պլանակ միսով լուիկա, տապկած ոչխարի լեարդ ու դինի:

Սամոթրակեցին չի կրցար գիմանալ այս անգամ. յայտնի էր որ չպիտի կրընար աւելի բան մը ուտել: Եւ յուսահատի աչքերով նոր բերուած կերակուրներուն նայելէ ետքը կրօէ իր մրցակցին.

— Բան մը պիտի ըսեմ քեզի:

— Շարունակենք ուտել, կը պատասխանէ միւսը, վերջը կը խօսինք:

Խեղճ Սամոթրակեցին ստիպուած կը փորձէ ուտել տակաւին, բայց հաշիւ առաջին պատառը բերանը դրած, մարած կ'իյնայ և սեղանին տակը կը գլորի:

Դեղարան մը կը տանին զայն, մինչդեռ միւսը՝ Արշիպեղագոսի կղզիներէն, սեղանին վրայ գտնուած բոլոր կերակուրներն ալ լափելէ ետքը, կէս օխա ալ կարկանդակ կ'ուտէ... Ի պատիւ իր հշանածին:

Այս հետաքրքրական ճաշը ճիշդ 8 ժամ տեւր է:

Թահարոս

(Այսօրուան թղթաբեր)

Նպաստից Յանձնաժողովը որոշեց Լիմ և Կոռուց անապատներու մէջ այս երկու վանքերու օժանդակութեամբ որքանոց մը բանալ. նոյնպէս որքանոց մըն ալ Խիզանի մէջ:

— Ինչպատ Զայաստանի սովելոց Ռուս-ձուբէ եւ շրջականներէն 100 Փրանսական սկի Տաւաբուած ու զրկուած է Պատրիարքարան:

— «Երեքշաբթի օրը դուժարուած Կրօն. ժողովը զբաղեցաւ նաեւ ի մէջ այլոց հետեւալ խնդրով.

Առանայի Հիւրմիւզեան Տ. Գէորգ քահանային կատարած կրկնամուսնութեան առթիւ՝ ժողովին կողմէ նախապէս տրուած որոշման մասին թեր ու դէմ գրութիւններ հասած էին Պատրիարքարան: Ժողովը նկատելով որ այդ գրութիւնները յիշեալ քահանային նկատմամբ եղած ամբաստանութիւնները ծանրացնելու բնութիւնը ունին, կրկնեց իր նախորդ որոշումը:

Արեւելք

— Այս սարի Բեգերսպսերկի համալսարանէն շրջանաւարտ ելած են երեք Կովկասցի Հայեր. Միքայէլ Աթաբէգեան, Գէորգ Կուղանեան և Սիրական Տիգրանեան: Նոյնպէս Թիֆլիզի ազգեանց Բ. և Գ. գիմնազիօններու շրջանաւարտ օրիորդներէն 17 Հայ աղջիկներ:

Երէկ իրիկուն հետեւեալ քառք-քօսք ստացանք Ռուստուբէ.

«Չորեքշաբթի օրը ազգային վարժարանին մէջ նորէն ցաւալի գէպք մը պատահեցաւ: Պ. Տնօրէնը աղջկանց վարժարանին նկուղին մէջ աշխատող ատաղձագործը ծեծեց, որուն քիթը բերանը արիւնեցաւ. հետեւեալ օրը առաւօտուն նոյն տնօրէնը փողոցէ մը անցնելու պահուն անձանթի մը կողմէ ուղղուած պատուոնի հարուածներով գլխէն վիրաւորուեցաւ»:

(Մանրամասնութիւնք թղթատարով):

ԱՌԻԹԵՆ ՕԳՏՈՒՈՂՆԵՐ

Ատաղձագործը կ'օգտուի՝ տուն շինողներէն.

Քահանան՝ կնուսքէ, ամուսնութենէ ու մեռելներէն.

Յեղափոխական մարմինները՝ կառավարութիւններուն ըրած անիրաւութիւններէն.

Արմենիա՝ ժողովուրդի մէկ մասին «օժանդակութիւնէն».

Նազար բէկ և Մարիամ տուտու՝ անգիտակից յեղափոխական մէկ տարրէն:

Պ. Արշամ՝ «Միութեան» շլացուցիչ գաղափարէն.

Դրօշակ՝ միամիտ հայրենասէրներէն.

Մարտ՝ «Այսպատկաւ» գաղափարակիցներէն.

Նոր կեանք՝ «Մարտի» թողոցած հետքերէն կամ եղծեկ՝ խաթանէն.

Լաւմէնի՝ Լահէյի վեհաժողովէն.

Անահիտ՝ ազգին օգուտ չունեցող բանի մը ջոջերէն.

Իրաւունք՝ էհլի բեամիլ կիրուհիտէն:

Շարժում՝ կրակոտ երիտասարդներէն.

Փիւնիկ՝ ննջեցեալներուն մահազգի հրատարակումէն.

Հայելի՝ տգեղ բարքեր ունեցողներէն.

Կարգ մը 20 Փրանքնոց վարժապետներ՝ հմտութեան տէր ուսուցիչներու քիչութեամբէն.

Խաչագողները՝ ժողովուրդի խառնափնթոր հոսանքէն.

Խլափուղները՝ ամուսնանալ ուզող անձարակներէն.

Անիրաւութիւնը՝ օրէնքի թուլութենէն.

Առնեմ-Չտամ՝ ճեյնեկսիզ պտտողներէն.

Անգործ երիտասարդները՝ թրախօժալը աղջիկներէն.

Ֆապրիգաթօրները՝ աղքատ գործաւորներէն.

Չրիաճարակները՝ ամուր-երեսութենէն:

ԶԻԿ—ԶԱԿ

ԱԶԴ

Աղջկանց Կրթարանին տարեկան բերանացի հարցաքննութիւնք պիտի սկսին յառաջիկայ երկուշաբթի, յունիս 28 և պիտի աւարտին յուլիս 4:

ԳԵՂԵՑԻԿ ԽՕՄԲԵՐ

Աստուած կը ներէ, բայց բնութիւնը՝
երբէք:

Մարդը դաշնակ մ'է: Երբ վերջին թե-
լը փրթի, այն ատեն միայն փայտի կտոր մը
կը դառնայ:

Թոթովող մանուկը բսան հանձարեղ մար-
դիկը կը լռեցնէ:

Ճանճերը նման են լրագրագետներու.
անոնց համար նուիրական բան չի կայ:

Այն տունը ուր մանուկ չի կայ, կը նը-
մանի զանգակի մը որ լեզու չունի:

Սոխակին երգը և կատուններուն մլաւի-
նը երկու կերպեր են նոյն զգացումը բա-
ցատրելու. բայց իրենք իրենց մէջ զիրար
չեն հասկնար:

Անտարբերութիւնը մենակեաց ծաղիկ
մ'է որ ճահիճի մը վրայ կը բուսնի:

Բարեկամութիւնը որ երախտագիտու-
թեան վրայ հիմնուած է, կը նմանի լուսան-
կարի. ժամանակ մը ետքը կը տգուցնի:

ԳԱՐՄԷՆ ՍԻՆԱՍ

ՀԵԼԼԷՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՊ ՈՒ
ԵՐԻՏԱՍԱՐԴՊԻ ՀԻՔ

Ամուսնանալու տարիքն ունեցող Հելլե-
նուհիք անցեալները Աթէնքի մէջ ժողով մը
գումարելով, Յունական կառավարութեան ա-
ղերսագիր մը տուած են, որով կը պահան-
ջեն խիստ օրէնք մը սահմանել այն երիտա-
սարգաց համար, որոնք 25 տարին լրացու-
ցած ըլլալով տակաւին չեն ամուսնանար:
Ստորագրող օրիորդք կառաջարկեն մեծ տու-
գանքի ենթարկել այսօրինակ պարոնները,
ու կը յաւելուն թէ ասով առաջնառնուած
պիտի ըլլայ տարուէ տարի աւելնալու վրայ
եղող չափահաս օրիորդներուն ամուրի մնա-
լուն և յունական բազմամարդութեան հե-
տըզհետէ պակսելուն:

Օրիորդաց այս ընթացքին հակառակող

Աթենացի երիտասարդք ալ ժողով գումարե-
լով, հետեւեալ 10 առաջարկներով աղերսա-
գիր մը տուած են կառավարութեան.

Ա. Իւրաքանչիւր օրիորդի հագուստը
15 ֆրանքէ աւելի արժողութիւն չունենայ:

Բ. Տարին երկու ձեռքէ աւելի հագուստ
չի պահանջեն իրենց էրկներէն.

Գ. Փոխանակ գլխարկ դնելու՝ պարզ
շղարշով մը ծածկեն գլուխին:

Դ. Արհեստական հոտերով ու փուտ-
րաներով չի մալակոնուին:

Ե. Կիրակի և գիշեր ատեններ կորսը-
ւած հաւերու պէս փողոցները չի պտտին:

Զ. Տարին մէկ անգամէն աւելի չուզեն
պարահանդէս երթալ, ու այն դարձեալ պարզ
հագուստներով:

Է. Իրենց ձերմակեղէնները ու հագուստ-
ները իրենք կարեն. նոյնպէս գուլպաներին
իրենք հիւսեն և ոչ թէ էրկներուն գնել տան:

Ը. Տուններուն մէջ մէկէ աւելի սպա-
սուհի չուզեն, և այն ալ 3 զաւակ ունենա-
լէ ետքը:

Թ. Իրենց տղաքը իրենք սնուցանելով,
կաթնտու կիներ չի պահանջեն.

Ժ. Էրկներին իրր ծառայ կամ գերի
չըմբռնեն:

Կըսեն թէ՝ օրիորդք աւելի կ'ուզեն ե-
ղեր ամուրի մնալ, բան թէ համակերպիլ սոյն
10 գեղեցիկ առաջարկներուն, որով անգամ
մ'ալ կը հաստատուի սա ճշմարտութիւնը
թէ, գեղեցիկ սեռը ամեն բանէ կը հրաժա-
րի՝ բայց ոչ արգուզարգէ:

ՄԷՆԷ

ՃԱԲՈՆԻ ՕՐԻՈՐԴՔ

Ճաբոնցի օրիորդները երբ ամուսնանա-
լու տարիքին հասնին, լրագիրներու մէջ հե-
տեւեալ կերպով աղերս կուտան եղեր.

Ստորագրեալ՝ գեղեցիկ եմ, ինչպէս ա-
ռաւօտեան արշալոյսը. մազերս խարտեալ,
խիտ և երկայն են. դէմքս ձերմակ է ու կը-
լորաձև, ցորեկը ծաղիկներով կը պսոսնում
խիւ գիշերը աստղերով. ունիմ բաւական ե-

կամուտ գեղեցիկ երիտասարդի մը հետ ծաղիկ օրերս անցունելու համար . կը փնտռեմ փեսայ մը , որ ըլլայ երիտասարդ և գեղեցիկ որուն պատրաստ եմ տալ սիրտս բոլոր կեանքի մէջ , և բաժնել ուրախութիւնը ու տըխրութիւնը հաւասարապէս մեր երկուքին մէջ , սա միակ պայմանաւ որ , երբոր ես մեռնիմ , նա ալ ինծի հետ թաղուի գերեզմանիս մէջ :

Ստորագրութիւն

Ուրազիրա Մուսթաֆա

ԲԱՌԱԽԱՆ

Ֆրանսական Կահիրէի նկատմամբ Ֆրանսական Տրէյֆիւսեան թերթ մը Կահիրէի անդամներուն անուններէն գրեթէ առնելով բառախաղ մը շինած է , հետեւեալ կերպով , զորս Ֆրանսերէնէ բոլորովին անկախ՝ Հայերէնի դարձուցինք :

ՏՐԵՅՖԻՍԵԱՆ Է

Վալ	Տ	էք Ռուս
Միլ	ր	ան
Տ	է	լքասէ
Լէ	յ	կ
Կալի	ժ	է
Տիւր	իւ	ի
Լանէ	ս	ան
Պօս	ն	ն
Գ	ա	յլէ
Մօ	ն	իս
Տըգ	է	

— Անդիէն Տրէյֆիւսի գործէն վերջին աստիճան զգուած թերթ մըն ալ յուսահատութեամբ հետեւեալ բառախաղը կը հանէ .

ԱԼ ԲԱՌԱԽԱՆ ԵՆ

Տէլք	ա	սէ
Մի	լ	ոան
Տիւ	ք	իւի
Լ	ա	նէսան
Վալտէք	Ռո	սօ
Կ	ա	լիֆէ
Լէյ	կ	
Գ	ա	յլէ
Պօսէ	ն	
Տ	ն	գուէ
Մօ	ն	իս

Իսկ նախարարական թերթ մըն ալ հետեւեալ բառախաղը կը հանէ .

ԵՐԿԱՐԱՏԵԻ ԵՆ

Տ	ն	լքասէ
Միլ	ր	ան
Լէյ	կ	
Գ	ա	յլէ
Տըգ	ր	է
Կ	ա	լիֆէ
Պօ	Տ	էն
Լան	ն	սան
Տի	լ	բիւի
Վալտ	ն	ք Ռուս
Մօ	ն	իս

Սուրհանդակ

ԶՈՒԱՐՃԱԼԻ Ք



Անցեալ իրիկուն զբօսավայրի մը մէջ օղիէն խմուած պարոն մը օրիորդի մը կ'ըսէր .

— Ա՛հ , օրիորդ , զձեզ տեսնելէս ի վեր սիրտս կալեկոծի , սաստիկ յուզման մէջ եմ . եթէ այս հիւանդութիւնս քիչ մ'ալ տեւէ՝ աւա՛ղ , գերեզման պիտի իջեցնէ զիս :

— Ի՞նչ ըսել կուզէք պարոն .

— Ըսել կուզեմ թէ՛ իմ այս հիւանդութիւնս միմիայն դուք կրնաք բըժըշկել , ուստի ձեր հրամանին կ'ըսպասեմ :

— Բայց ես բժիշկ չեմ .

— Ո՛հ . եթէ գիտնաք թէ որչա՛փ կը սիրեմ զձեզ , և եթէ իմ ձեր վրայ ունեցած սիրոյս մէկ հարիւրերորդը փոխադարձաբար դուք ալ իմ վրայ ունենաք , եթէ քաղցր նայուածք մը նետէք թշուառիս վրայ՝ ա՛հ , անմիջապէս պիտի բժշկուիմ , եւ այս վայրկեանէս քառօր թո՛ւնէ՛մ որ իմն ըլլալու բարեբաղդութիւնը պիտի ունենաք :

— Պարոն , քանի որ զիս բժիշկ կը

կոչէք՝ սա հրահանգս լսեցէք, աւելի ազնկ կրնէք որ այդ սովորած երկու գահիւրէն բառերնուդ տեղ նախ՝ «յանդըգնութիւն» կոչուած բառին սահմանը ու յետոյ պատուած կոչիկներուդ ձեւաւոր կարկտան մը դնել տալը սովորիք:

Պարոնը այս դեղագիրը առնելէն ետքը գլուխը կը կախէ և բազմութեան մէջ կաններու թանայ:

Ճաշարանի մը մէջ.

Պագսանա՛, պիր հաշլամա կէթիր.

— Էնա վռասթօ.

— Եանընա վռասթօ գօյմա.

— Խայըր, շիմտի կէթիր.

— Է՛յ ճանըմ, տահա պէքէյիմ մի.

— Հա՛, կէթիտօր.

— Իւչ սասթօ օլտու գարտա՛շ, հաշլամա կէթէճէք.

— Հաշլամա պիր.

— Արթըգ խտէմէմ, էյլալլահ.

— Սէպէպ.

— Հաշլամա կէթինճէյէ գատար պու տառ վէ սըճագ տիւքեանտա հաշլանաճագ վագթիմ եօգ:

Էյ աֆէրին սանա, պիրէ Օվանէս, էկէր սէնին կիպի եալանճը վար տէրլէրսէ, հիչ ինանմայաճարմ. կանթեալարըմ նէրտէ:

— Վա՛յ... էմմէթէն ունութտում:

— Եայանճը՞, քիմ ինանըր քի.

— Ինանըրսան ունութտում մօրօ, կէլ շու բարմաղըմա պիր շէյպաղլա քի եարըն ագչամ ունութմայրմ:

— Պու գաշընճը՞ պաղլայըլ տըր, նի՛չիւն ունութուեօրսըն.

— Չիւնքի պիր իքի պաղլայըլլա ագլըմ պաղլանմայօր:

ԿԷԼ ԳԱՆԹԱՐԱ՝..

(Շարունակութիւն)

— Սիրեմ գրեզ և Աստուած բո տուն չաւրի, որի՞ կըսես.

— Քեզի կըսեմ, տէր Նահապետ.

— «Հազիւ թէ մենք մեր տեղը նստած, ծառերի ու պուրակների սաղարթներով շրջապատուած իշկեռին (?) էն փչող կենսատուօրը կը ծծէինք դիտելով հայրենիքի յիշատակները...»

— Ինչե՛ր կըսես կոր եղբայր, փութա՛, էջ այտի.

— «Կաթնաղբիւրի կաթնահամ ջուրովեցունկ հեշտաւոր առտուան փչող կենսաբեր սիւքին հետ բարկաճայթ եւ կուգար...»

(Շարունակելի) տե՛ս Շարժում թիւ 74-ը.

— Եղբայր, Սարսընթըյին միջոցաւ տոնցմէ որչափ բան կըլլեցուցիր նէ՛ բաւական համարէ ու եկո՛ւ նստէ որ կշռուիս:

— Ուրեմն իմ նոր յղացած ծրագրիս վրայ քեզի բացատրութիւն տալու եմ. Հայաստան ապատուելէ ետքը՝ տիպար գիւղ մը պիտի հաստատենք 12 տունէ բաղկացեալ. այս գիւղը ամեն ինչ պիտի ունենայ իւր մէջ, բահանայ, խմբագիր, վարժապետ, բանաստեղծ, տպագրիչ, կազմարար, արհեստաւոր, կնքուղաւոր, արձակ և ոտանաւոր...»

— Ու կարծեմ թէ այդ ամենն ալ ինքզինքովնիդ պիտի ներկայացնէք.

— Այն տեղ ուրիշ ու է ընտանիք չպիտի կրնայ հաստատուիլ, առանց մեր հաւանութեանը:

— Հարկաւ, որո՞ւն բերնին է մնացեր:

— Ա՛խ պարոն Բոժոժիկ, խոշո՞ր, խոշո՞ր երեակայութիւններով տոգորուած է հօգիս մօտերս ալ մտադիր եմ հրատարակել վէպ մը, որ...

— Խորհուրդ կուտամ քեզի որ այդ վէպը երեակայեալ գիւղիդ մէջ հաստատուելէ ետքը հոն հրատարակես, որուն կողքին վրայ պիտի կարդացուի՝ «Հեղինակութիւն Նահապետական, Տպարան Նահապետական Կազմատուն Նահապետական, Գիւղ Նահապետական, Գիւղապետը Նահապետական, Ընթերցողը Նահապետական, Ունկնդիրը Նահապետական վերջապէս ամեն ինչ Նահապետական: Ո՛հ ի՛նչ փառք ի՛նչ մեծութիւն: Հիմա եկուր որ կշռուիս.

— Քո տուն չաւրէ, ես ի՛նչ կշռուիմք մարմին ունիմ որ պիտի կշռես.

— Իրաւ, պզտիկ մարդ մը կերեւաս, բայց

բու կարողութենէդ աւելի ծանրութիւններ սնիս, որուն համար դուն ալ հետաքրքրուելու ես, ուրիմն վար իջիր . . . աֆէրիմ . . . նայէ՛ զբեզ գրկելով կը նստեցնենք կոր . . . ալ ի՞նչ կուզես : (կշռելով) վաթսուներ եօթն ու կէս . . .

— Տօ բեամպախ, ասացի թէ ես ի՞նչ ծանրութիւն ունիմ :

— Հիմա կը հասկնաս : 25 քիլօ այն հանգուցեալ յօդուածներուդ ծանրութիւնը որոնք մեր մեղքէն լոյս տեսան Սարսընթըյին մէջ՝ առ ի չգոյէ նիւթերու, 10 քիլօ անիրանալի ծրագիրներդ . 5 քիլօ ալ 3-4 հոգի տեղ մը հաւաքուած տեսնելուդ պէս, անոնց մէջ ցատկելով քրած ճառախօսութիւններդ, 25 քիլօ ալ գրպանդ լեցուցած հատընտիր ոտանաւորներդ, որոնք խանութ խանութ պտտելով պարզամիտներուն կը կլլեցնէիր, մնացած երկուք ու կէս քիլօն ալ՝ ըստ բանիքում, «ձորակէն բխող կաթնադրերին կաթնահամ փոխին», պօլութեանէն բեղմնաւորեալ գրական զուէրդ է : Հայտէ, Ծնոցը ցնծայ :

— Ա՛ռ նայինք, սիրեմ՝ զբեզ և Աստուած քո տուն չաւրէ :

— Դէ՛ ճանքմ, կէլ գանթարա . . .

— Բարե պարոն Բոթոթիկ :

— Օ՛. կոսթութին խաչատուրօֆ, հրամայեցէք :

— Ներեցէք, զբաղեալ նմ, ես գործի մարդ եմ :

— Եղբայր, ամենքս ալ գործի մարդ ենք, շատ չպիտի կենաս, մէկ երկու վայրկեանի գործ է :

— «Ծօ ատ ի՞նչ խարախօնձօղող խանթար է. ասով խարախօնձօղ դասատուները կռէդ :

— Անոնք կռեցինք . հիմա ալ այդ բառին հեղինակը պիտի կռնենք . նստեցէք նայիմ :

— Բայց ես շատ մը ականաւոր անձնաւորութեանց հետ տեսնուած ու կշռուած եմ, ի մէջ այլոց խրիմեանի, Նարպէյի ու Չէրաղի հետ թղթակցութիւններ ունեցած եմ . պէտք է գիտնաք որ ես ազգին մէջ պակասութիւն գործողները անաչառ կերպով բնագոտողները թէ կը յարգեմ և թէ . . .

— Շատ աղէկ, ես ալ կը յարգեմ ձեր այդ սկզբունքը, բայց կը փափաքէի որ դուք ալ զերծ ըլլայիք այդ կարգի թերութենէ :

— Ի՞նչպէս :

— Երբ ազգը ձեր կարողութիւնը գնահատելով հոգաբարձու ընտրեց, առաջին ան-

գամ ընդունեցաք . բայց բանի մը ամիս ետքը առանց պատճառի հրաժարելովնիդ վարժարանին յառաջգիմութեանը օգուտ մը մատուցած չեղաք, որով արժանացաք կշռուելու . հետեաբար նստեցէք նայիմ . (կը նստեցնէ) 45՝ . . . Ասկէ կը զեղչենք արտասահմանի մէջ ունեցած յեղափոխականի համբաւնիդ 1 ուկէս քիլօ . եռամսեայ վարած հոգաբարձութեան պաշտօնով ցոյց տուած ազգասիրութիւննիդ կէս քիլօ, ինքնագովական ծանրութիւննիդ ալ 5 քիլօ, մնացածն ալ դուք էք . հրամայեցէք, Ծնոցը տուէք ու ածապարեցէք, ըստ որում դուք գործի մարդ էք, զբաղեալ մարդ էք :

— Դուք ալ խարախօնձօղօղ էք :

— Բոթոթիկ . էրբէթէ Աղապէկիս :

— Օ՛ օ՛ . . . քալօս օրիսէթէ օ քիրիօս Աղաբեկիս . հրամայեցէք :

— Ժամանակ չունիմ, նամակատուն կերթամ կոր . բառթ բօստալի մը վրայ պզտիկ գրերով երեք սիւնակ լեցնելու չափ յօդուած մը գրած եմ «Իրաւունք»ին համար, անիկա տուիլը պիտի ձգեմ :

— Հետը միֆրօւֆոպ մըն ալ կը զրկե՞ս կոր, որ գրաշարը կարգայ :

— Այդ բանը ինծի չի վերաբերիր :

— Աւրեմ հրամայեցէք, շուտ մը ձեզ ալ կռնեմ ու ճամբայ ելլեմ դէպի Ֆիլիպէ :

— Ատ ի՞նչ տղայական բան է «հիմա խընդալէս կը ճաթիմ» :

— Չըլլայ որ ատանկ կատակ մը ընէք .

հայտէ նստեցէք նայիմ :

— Չէ՛, ես տօմնուէին կշռուած խանթարովը չեմ կշռուիր :

— Եղբայր, հիմա անիկա հօս չէ՛, դուն սանկ նստէ նայիմ . . . ահա լմնցաւ . . . կը բաշեմ կոր . . . իննսունը հինգ . . .

— Ի՞նչ կրես . ես նիհար մէկն եմ . 95ը ո՛ւսկից հանեցիր :

— Կեցիր որ հաշիւդ տամ, 20 քիլօ «Շըփթ կացութիւն» յօդուածներուդ շփոթութիւնները, 30 քիլօ «Իրաւունք»ի խմբագրատան զամբիւղին մէջ հանգստեան կոշուած միֆրօւֆոպով կարդացուելիք յօդուածներդ, 5 քիլօ ալ իւրաքանչիւր յօդուածիդ մէջ տեղաւորած չափերտներդ, ու 10 քիլօ հետաքրքրական հետազօտութիւններդ, գումար ընդհանուր 65, մնացեալն ալ դուն ետ հայտէ Ծնոցը տուր ու դնա գրասեղանիդ աւջին՝ համով հոտով յօդուած մ'ալ գրէ . . . Ծառայ եմ, մնաք բարեաւ :

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ ՊՈՌԻՍ

Հաճի Բանաբոյի կից

1899 Յունիս 26 Շաբաթ գիշեր ժամ 9 1/2

Ա. Սպանո-Աերիկայի պատերազմը մեջկատակ.
Բ. Պարախաղ 1 արար.
Գ. Մարմնամարզ 1 "
Դ. Երգ 1 "
Ե. "Ջաղացքին գործաւորները" թուրքերէն զաւեշտ 2 արար:

Կիրակի գիշեր

Մեծն Աղէքսանդր Մակեդոնացի
"Նախանձոտը" զաւեշտ

Գիները դիւրամատչելի են:

Մ. 2.

ԹՈԹՈՎՍՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը փաճառի ի գին 25 սանդիմ, Ա. Զարպհանէլեանի գրատունը, Վառնա:

Ն Բ Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

Մեղք և Աղաւազ

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափաղեան

Գին 60 սանդիմ: Դիմել խմբագրութեան:



ԳՈՒՇԱԿ

Ա. ՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով դիմել խմբագրութեան:

**ՄԵԾ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ՍՅՅԻԱ ՔԱՂԱՔԻ**



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ
Երաշխաւորեալ

Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ

50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	թիւեր.
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-3նոյ	16,000	"

Գիներն են ՈՍԿԻ ՖՐ.	Մէկ ռութլը.
Կէս	1, 25 Ֆ.
Ամբողջ	2, 50 Ֆ.
Ա. Ամիս	5 Ֆ.
Բ. " "	8 Ֆ.
Գ. " "	10 Ֆ.
Դ. " "	16 Ֆ.
Ե. " "	20 Ֆ.
Զ. " "	28 Ֆ.
Է. " "	24 Ֆ.
Ը. " "	17, 20 Ֆ.
Թ. " "	115, 20 Ֆ.
Յ. " "	8, 60 Ֆ.
Ն. " "	57, 60 Ֆ.
Տ. " "	4, 30 Ֆ.
Թ. " "	28, 80 Ֆ.
Ճ. " "	2, 50 Ֆ.
Դ. " "	4 Ֆ.
Ե. " "	5 Ֆ.
Ն. " "	7 Ֆ.
Տ. " "	6 Ֆ.
Թ. " "	2, 15 Ֆ.
Ճ. " "	14, 40 Ֆ.

Գնելու և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է գրել Սեդանաւոր Տիար ՍԱՐԳԻՍ ԳԱՅՐԷԼԵԱՆ, միակ գրեալ գործակալ սոյն վիճակահանութեան վառնա, Մասալա:

Շրջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէնն ալ վճարել:

Отговорникъ М. Сеновъ
Печатница Взаимность — "Варна."